կը բուէ, Antonio Ziroto. — I Zanandrea Asolano. — D. Zuan Matteo Asola. — Zuan Andrea որոնք այդ ժամանակամիջոցին մէջ իրենց տպարաններն ունէին ի Վենետիկ: Հ. Ալիշան «Հայ-Վենետ»ի մէջ կայանք կու տայ Zuan Andreaի որ խոալացի նշանաւոր փորագրիչ-տպագրիչ մըն է եղեր: Իսկ Մարսիլիա հրատարակուող Arménia ի 29 Մայիս 1912 թուակիր համարին մէջ՝ Բարիզեան Կ. Ց. Բասմաջեան բանասէրը սապէս կը մեկնէ առեղծուածը: D = Dei (servus) ծառայ Աստուծոյ: I = Iacobus (Յակոբ): Z = Zanni կամ Zuan (Յովհաննէս), թերեւս Հայ-Հռոմ. ընտանիք մը, Ծաննի: A = Armenius (Հայ): — Ո՛վ որ ալ ըլլայ այս «Մեղապարտ Յակոբ»ը, հաւանական է որ իր սեպհական տպարանը չէ ունեցած և վերոյիշեալ գիրքերը տպել տուած է օտարի մը գործարանին մէջ, — ծանօթ ըլլալով մեզ՝ տեղական կառավարութեան երբեմնի խստութիւնը՝ տարբեր ազգութենէ եղող տպագրիչներու հանդէպ:



Նմանահանութիւն

Բովանդակութեան տեսակէտով մեծ բան մը չեն արժեր այս 5 գիրքերն ալ: **Պարզատոմար**ը (որմէ 3 օրինակ կը գտնուի Վիեննայի Մխիթարեանց և Երուսաղէմի Յակոբեանց վանատուները), փոքրադիր ութածալ է, 59 թուղթ, թերթերն այրուբենով թուարկուած, տպագրութիւնը ծայրէ ի ծայր միօրինակ գիրով՝ մաքուր ու կանոնաւոր, սեւով և կարմիրով: Բաց ի պարզատոմարէն՝ կը պարունակէ «նշանացոյց», «կաղանդացոյց», «երազացոյց», «ծննդեան աղայոց» և «մարմնախաղաց»:

**Պատարագատետր**ը (մէկ օրինակ ունի Երուսաղէմ), 17 սանթիմ երկայն և 11 սնթ. լայն՝ ութածալ է, ամբողջովին մէկ տեսակ խոշոր ու անձեւ գիրով, կրկնագոյն, **ս** և **ռ** տառերն ուրեք ուրեք իրարու տեղ գործածուած, քանի մը պատկերներով, 44 թուղթ, թերթերն ալ այրուբենով թուարկուած (*):

**Ուրբաթագիրք**, կրկնագոյն, 2 մասի բաժնուած, «Սուրբ Ուրբաթ» և «Աղօթք Կիպրիանոսի», ընդ ամէնը 24 թուղթ: Այսահալած աղօթքներով, յուռութքներով, ծռուած Վեցհազարեակով և դեռ խել մը պառաւաշունչ ըմբռնումներով խճողուած ողորմելի մատեան մը որ ա՛յսչափ կ՛ըլլայ: Գաղափար մը տալու համար, «Ուրբաթագիրք»էն թարգմանաբար հատուած մը ներկայացնենք հոս. — «Ամէն տեսակ ծեծ (գան) ի «մասին գրուածք: Ա՛ռ պողպատէ դանակ «մը և 3 գամ, առնելով խաչակնքէ՛ (?) «վերքին վրայ և աղօթքներ բսէ՛» . . . :

**Տաղարան**ը (2 օրինակ Երուսաղէմ, 1 օրինակ ալ Պալեան Տրդատ Ս.ի քով) կը բո-

(*) **Պատարագատետր**ին հոմանիշ են **Պատարագամատոյց** եւ **Խորհրդատետր**՝ որոնցմէ զանազան ձեւով հրատարակուած են հետեւեալները. — ՊՈԼԻՍ 1568, 1706, 1748, 1787, 1844: ՀՌՈՄ 1642, 1677, 1777: ՎԵՆԵՏԻԿ 1686, 1690, 1741, 1809, 1823, 1826, 1832, 1854: ԻԶՄԻՐ 1761: ՆԱԽԻՋԵՒԱՆ 1794: ԹՐԻԷՍԹԷ 1803: ԵՐՈՒՍԱՂԷՄ 1841, 1873, 1884: ՎԻԷՆՆԱ 1858, 1879, 1904: ԷՋՄԻԱԾԻՆ 1873: Եւն. եւն.: — Նաեւ 1863ին արեւանկարի արուեստը սորվելու համար երբ Եւրոպա կ'անցնի Ած.ատուրեան Եղայի Վրդ. եւ Լոնտոնի մէջ հայ մատուռ մը կը հաստատէ, «Պատարագամատոյց»ը թարգմանելով անգլիերէնի՝ կը հրատարակէ հայերէն բնագրին հետ: